



Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի /ԻԿՕՄՕՍ/  
առաջարկությամբ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1983թ.-ից ապրիլի 18-ը նշում է որպես Հուշարձանների և  
տեսարժան վայրերի միջազգային օր՝ կոչ անելով իր անդամ-պետություններին  
գործունեության ամենատարբեր ձևերով նպաստել հուշարձանների պահպանությանը և  
լուսաբանել ժառանգության պահպանության կարևորությունն ու խնդիրները, բարձրացնել  
հասարակության զգոնությունը և պատասխանատվությունը ժառանգության պահպանության  
հանդեպ: Այս տարի ժառանգության պահպանությունն առաջարկվել է ներկայանալ  
տարաբնույթ մշակութային նախաձեռնություններով՝ «ԻԿՕՄՕՍ-ի 50-ամյակը» խորագրի  
ներքո՝ ի նշանավորումն ԻԿՕՄՕՍ-ի հիմնադրման 50-րդ տարեդարձի:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը ԻԿՕՄՕՍ/Հայաստանի հետ  
միասին, միանալով ԻԿՕՄՕՍ-ի 50-ամյակը նշելու կարևոր առաքելությանը, մի շարք  
միջոցառումների շարքում Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը՝ ապրիլի  
18-ին, կիրականացնի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ցուցահանդես՝  
«Արևմտյան Հայաստանի ուրարտական ժառանգությունը» խորագրով:

Հայկական հուշարձանների մի զգալի մաս՝ հազարավոր եկեղեցիներ, վանքեր եւ  
ճարտարապետական, հնագիտական ժառանգության հոգևոր ու աշխարհիկ՝ այդ թվում  
ուրարտական ժամանակաշրջանի արժեքներ, գտնվելով Արևմտյան  
Հայաստանում/Թուրքիա/, հայ ժողովրդի տարհանման և զանգվածային ջարդերի ժամանակ  
ամբողջությամբ ավերվել, վնասվել կամ հասցվել է անմխիթար վիճակի: Նկատի ունենալով  
Մեծ եղեռնի հետևանքով նաև ուրարտական ժառանգությունը մեծապես վնասելու և  
կորստյան մատնելու իրողությունը՝ ցուցահանդեսը կուղեկցվի Արևմտյան Հայաստանի  
ուրարտական հուշարձանների լուսանկարներով և տեղեկատվական պաստառներով:  
Ցուցահանդեսում, մասնավորապես, կներկայացվեն Պատմական Հայաստանի  
ուրարտական հուշարձանները՝ ամրոց-բնակավայրերը /Տուշպա, Հայկաբերդ, Այանիս/,  
բացօթյա ծիսապաշտամունքային համալիրները /Միերի Դուռ, Հագինե Փիրի, Աշտակերտ,  
Գանձադուռ/ և հայկական եկեղեցիները, որտեղ գտնվել են ուրարտական սեպագիր  
արձանագրություններ /Վարազավանք, Արծվաբերդ, Աղթամարի Սբ Խաչ և այլն/:  
Հուշարձաններ, որոնք տարբեր ժամանակներում պեղվել և ուսումնասիրվել են հայ և  
օտարազգի ականավոր հնագետների կողմից, որոնց մեկնությունն ու հանրայնացումը,  
սակայն, մինչ օրս լիարժեք չէ: Ցուցահանդեսի խորհուրդն է՝ իրազեկ դարձնել հայ, ինչպես և

